

**ՏԱՆԵԿԵՑԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ**

Ա .

Տեսայ իմ հոգուս հոգին՝ զարդարուած ու բաղնելըլայ.  
 Ես ալ ի դէմիկն ելայ՝ նեղ սօղմախ ու խիստ դալապայ,  
 Պէջան ալ ի վեր տարաւ, ունեւոյն արաւ թէ՛ Գընա՛,  
 Գընա՛ ու գիշերն արի՛, պա՛գ հազար մինչ որ լուսանայ.  
 Քեզի գիրկուծոց անեմ որ ամէն դիժարս դուրանայ:

Բ .

Գիշերս ես ի դուս ելայ, մանտր ու մեծ թաթան ի վերայ.  
 Իմ եարն դռնէ դուռ ընկեր զինչ նըռան հատըն կու դողայ.  
 Ով Աստուծոյ է ծառայ՝ իր փակուած դռնեկըն բանայ.  
 Թող զիս իր ծոցիկն առնու՝ ինչ որ աս մուրթն լուսանայո

Գ .

Երեկ ցորեկով բարով տանեին մեկ եար մի ճորով.  
 Ըզնա ճորով է տարած կամ խաբած է զինք դըրամով.  
 Սերն որ դըրամով լինի, զինք երել պիտի կըրակով.  
 Սերըն խնծորով պիտի կամ տրիեմ տրիեմ շէքերով:

Դ .

Ասա՛ ու լըսե՛, իմ եա՛ր, ոնց որ չէ տարեր քունըն զիս.  
 Ոնց որ քունըն զիս տանի, ամանա՛թ որ այլ չիխօսիմ.  
 Չարթնում՝ ես քէ քուֆըր տամ, որ ոտից մատանց դու երիս.  
 Ատոր երել ի՞նչ պիտի, բեր դընեմ երեսդ երեսիս:

Ե .

Տարին տասուերկու ամիս՝ կու տապիմ ի մէջ զնտանիս.  
 Օրեկ մըն չելար չեկիր՝ «Ի՞նչ կ'անես կամ ո՞նց կու լինիս.»  
 Ելար ու ան պահն եկար որ առել հոգիս բերանիս.  
 Մեռնի՛մ ես ի քո սիրուդ, որ երթաս յիսնէ խալըսիս:

Զ .

Ա՛յ իմ նուռ ու նուշ բերան, նուռ ու նուշ ծաղիկ 'ւ ըռահան,  
 Դու հազրեվարդի նըման, մարըն չէ բերել քեզ նըման.  
 Պըռունկդ է լիմոն նըման, կու բանաս դու մարդու մատան.  
 Լեզուդ է պուլպուլ նըման, կու գովէ զինչ գարնան նըման: